

891.99 092

d - 38S

92

ԳՐ. ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ԼԵՕ ԿԲՐԵՒ ՊԱՏՄԱԲԱՆ

ГР. ТЕՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ԼԵՕ ԿԱԿЪ ИСТОРИКЪ

891.99.092
L-385

Баку
Электропечатия газ. „Баку“
1912

6 NOV 2011

ԳՐ.ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՐ 1912

Կարմիր

ԼԵՕ ԻԲՐԵՒ ՊԱՏՄԱՎԱՆ

91.99.092

Հ-385.

1578



ГР. ТЕՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ЛЕО КАКЪ ИСТОРИКЪ

8270

ԾՐԸ

ԿՈՎԿԱՍԻԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԻՒՐ ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՆԵԱՆԻ ԱՌԹԻՆ

Բազու
Էլեկտրական սպառան „Բազու“
1912

14 APR 2014

«Երեսնամեակ Հայոց Բարեգործական
Ընկերութեան Կովկասում 1881—1911»: Կազ-
մից Էջո, Թիֆլիս, տպար. Մն, Մարտիրոս-
եանցի, 1911:

Ա. ՇԱՆՈՒՑՈՒՄՆ

«Հորիզոն» և «Ղարաբաղ» թերթերը հաղորդեցին,
որ Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թհմական Դպրանոցի պատ-
մութիւնը յանձնւած է գրելու Լէօին: Այդ լուրը պատ-
ճառ եղաւ, որ մենք վերջ ի վերջոյ վճռեցինք ասել այն,
ինչոր նկատել էինք Լէօի պատմագրելու պակասութիւն-
ների մասին մի աշխատութեան մէջ, որի վերնագիրն ըն-
թերցողը կարդաց արդէն այս քննադատականի ճակատին:

Երկար ժամանակ այդ աշխատութեան մասին մենք
լուսմ էինք հետեւեալ երկու պատճառով. նախ՝ Լէօ և
«Հորիզոն», Առաքելեան և «Մշակ» երկուսն էլ իրենց գա-
ւառական արբանեակներով միասին խառնաշփոթել էին
անձնական և կուսակցական, քաղաքական և համամարդ-
կային սահմանները, և կորցրել ամեն կրիտերիում. քառ
էին ստեղծել և ստեղծել են այժմիսկ մեր մամուլի
կեանքում, իսկ միամիտ ընթերցողների միաքն ու ճաշա-
կը պղտորել. այդ պայմաններում գրել նրանցից մէկնու-
մէկի գէմ՝ կը նշանակէր գրել հակառակորչ թերթերից
մէկում և գառնալ այդ թերթերի կուսակիցը. և գեռ պէտք
էր խնդրել էլ նրանցից, որ թոյլ տան իրենց թերթում
կարծիք յայտնել՝ ի հարկէ առանց միշտ հիւրասիրու-
թիւն գտնելու. իսկ արտասահմանեան թերթերը կանոնա-
ւոր չեն ստացւում այստեղ և քիչերն են կարդում նրանց:
Երկրորդ՝ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերու-
թեան հիմնարկութեան մասին մենք վաղուց մտադիր էինք

մի նոր յայտնագործութիւն անելու և նիւթ էինք հաւաքում այդ մասին, ուստի թողնում էինք, որ Լէօի «Երեսնամեակի» մասին էլ այնտեղ խօսենք:

Բայց այժմ խզում ենք մեր լոռութիւնը և ցանկութիւն ենք յայտնում, որ Լէօն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի պատմութիւնը չը գրի այնպէս, ինչպէս նա գրել է Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան պատմութիւնը՝ անթիւ և անհամար, գիտութեամբ և անգիտութեամբ գործած մեղանչումներով իրականութեան և դոկումենների դէմ: Խզում ենք մեր լոռութիւնը, ի հարկէ, ի վկաս մեր ուսուցչական նիհար՝ գըրպանի՝ առանձին բրօշիւր ստեղծելով մեր քննադատականից, որովհետև բարձր ենք դասում Ղարաբաղի Թեմական Դպրանոցի պատիւը և մեր բանասիրական և պատմական գրականութեան նշանակութիւնը: Թող այս բրօշիւրը մի նւէր լինի Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան մեզնից՝ իբրև նրա նախկին քարտուղարից նրա յօրելեանի առթիւ. և թող այդպիսով գէթ այդ յօրելեանը լինի մի բախտաւոր մոմենտ՝ մեր մամուլի և գրականութեան մշակներին սթափեցնող կեղծիքների և խարդախութեան արբեցուցիչ թմրութիւնից: Եւ՝ վերջապէս, Լէօի յաջող ոճը, որը ճապաղ չէ (vague) և անհատականութիւն (idiotisme) չունի, թող ծառայի իր հայրենի գաւառի կուլտուրական հաստատութեան անխարդախ մտքով և անկեղծ սիրով, առանց մոռանալու թէ ա) կեղծելով պատմութիւնը շրջել չի կարելի, բ) պատմութեան դատաստանից խուսափել ոչ ոք չի կարող և գ) «Ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի»:

F. Մ Ե Ղ Ա Ն Չ Ո Ւ Մ Ն Ե Ր

Առաջին՝ «Երեսնամեակի» էջ 330—331.

«Առաջին Վերաստուգող Յանձնաժողովը, որ ընարուեց 1883-ի յունիսի 6-ի ընդհանուր ժողովում, բաղկացած էր հետևեալ անձերից. Գ. Նահապետեան, Մ. Սա-

լամբէկեան և Աւետիս Վարդապետեան: Վերաստուգող Յանձնաժողովով գործի է հրաւիրւում 1883 թուականից»:

Այս բոլորը սխալ է. առաջին Վերաստուգող Յանձնաժողովն ընկերութեան ընդհանուր ժողովում 18 ապրիլի 1882 թւին, այսինքն՝ մի տարի և 48 օր առաջ քան Լէօն է գրել. ընտրւեցին ոչ թէ այն երեք հոգին, որոնց Լէօն է յիշել, այլ չորս հոգի. «Ընտրուած էին Ս. Մելիք-Մերաբեան, Գ. Նահապետեան, Խ. Աղուանեան և Գ. Տէր-Աղէքսանդրեան»: «Արձագանք» 1882 թ. էջ 415:

Խորհրդի արխիւում էլ գտնւում է մի «Գործ» № 33, «Հրաւէր պաշտօնական անձանց ընտրութիւնների»¹), որի մէջ մնացել են ժամանակի քարտուղարի՝ Ա. Եղեկեանի, ձեռքով գրւած երկու գրութեան պատճէններ, ա) № 157 մայիսի 4, 1882 թ., որով Խորհուրդը յայտնել է այդ չորս անձանց, որ նրանք ընտրւել են Վերաստուգող Յանձնաժողովի անդամ և բ) № 169 յունիսի 5, 1882 թ., որով Խորհուրդը հրաւիրում է նրանց նիստերի:

Ճշմարտութիւնն այսպէս վերականգնելուց յետոյ՝ յիշենք նաև այն, որ այս սխալը ճակատագրական բանալի է հասկանալու Ընկերութեան պատմութեան սկզբնական շրջանում՝ մինչև այժմ այլընդայլոյ պատմւած, քօղարկւած և հասկացւած մի կարդինալ խնդրի գոյութիւնը և նշանակութիւնը, որին ուրիշ աւելի յարմարագոյն մի առիթով պիտի դառնանք մենք:

Երկրորդ՝ «Երեսնամեակի» էջ 157.

«Ախալցխայի Տեղական Վարչութիւնը՝ ժողովրդի կըրթական պահանջներին բաւարարութիւն տալու համար,

¹⁾ Խորհրդի արխիւր զօրծերի բաժանել, բանամարկել եւ վերնագրի տակ ենք դրել մենք, ողերիս գրողը, ՄԵՐ Խարուղարութեան ծանահակ 1899 թւին: Այդ վերնագրերից շատերը հետաքրքր են Լէօն և նախկին մուծել են շատերն անփոփոխ կերպով „Երեսնամեակի” մէջ: Խակ № 33 „Գործ” Լէօն հետարքութիւնը չի շատել եւելի իրեւ հրաւիրելու պահեն: Արիմիր կարգի բերելով մենք անժամանակ ինքնարեարար մասդրւել էինք Ընկերութեան խանամեակի պատմութիւնը գրել. բայց 1899 թւին Ընկերութեան խափանելովը, անկատ մնաց նաև մեր մասդրւութիւնը:

1892 թուին Վարչութեան անդամ Սամսոն Յարութիւննեանի ջանքերով բաց արաւ Գրադարան-Ընթերցարան։ Գլխաւորապէս Ս. Յարութիւննեանի միջնորդութեամբ քաղաքը ընծայեց մի կտոր գետին գրադարանի շինութեան համար։

Ճշմարտութիւնն անարգւած է այս տողերի մէջ, ի շնորհս Սամսոն Յարութիւննեանի՝ Խորհրդի յօրելենական շրջանի Նախագահի։ «Երեսնամեակի» հրատարակութիւնից 15 տարի առաջ Ախալցխայի ճիւղի Գրադարան-Ընթերցարանի հիմնադրութեան խնդիրը պատմել, ստուգել և հաստատել են Ախալցխայի Տեղական Վարչութիւնը և Ընդհանուր ժողովը, որի եզրակացութիւնները յետոյ Թիֆլիզի Խորհուրդը քննել և ստուգել է թէ միջնորդներով և թէ անմիջապէս իր քարտուղարի անձնական ներկայութեամբ տեղնուանեղը Ախալցխայում։ Այդ բոլորից երեցել է, որ Ախալցխայի Գրադարան-Ընթերցարանի հիմնադիրն է գեներալ Իսահակ Մելիք Հայկագեան։ Խորհրդի այդ եզրակացութիւնն անցել է յետոյ կենդրոնական ժողովը, ուր ձայների մեծամասնութեամբ (7 ձեռնպահ, 51 սպիտակ, 18 սև) Գրադարան-Ընթերցարանի հիմնադրին—իսահակ Մելիք-Հայկագեանին (և ոչ թէ Խորհրդի այժմեան նախագահ Սամսոն Յարութիւննեանին, ինչպէս կէօն է յիշել) շնորհւեց Ընկերութեան պատւաւոր անդամութեան տիտղոսը՝ ծափահարութիւններով։ Մենք ընդունակում ենք մի հաւաած ժողովի ընդարձակ արձանագրութիւնից, որի տակ ստորագրել են ռախանական Ընդհանուր ժողովի բժշկապետ Բ. Նաւասարդեանց և քարտուղար Ստ. Մալխասեանց Տ. որոնց... վկայութեան չը հաւատարու ոչ մի հիմք չը կայ։

«...Շիսահակ Մելիք-Հայկագեանը եղել է հիմնադիր Ախալցխայի ճիւղի, տասն տարի անընդհատ վարել է ճիւղի նախագահի պաշտօնը. իւր եռանդով և գործունէութեամբ կեանք է ներշնչել և պահպանել է ճիւղը—հիմնել է գորգագործարան, խեղճ աղջիկներին արհեստ սո-

գորեցնելու համար, դրամական նուէրներ է հաւաքել, ձրի հող է ձեռք բերել, և առանց ընկերութեան միջոցներից ծախս անելու՝ շինել է ընկերութեան համար մի գեղեցիկ քարաշէն Գրադարան-Ընթերցարան։ Խորհուրդն յանձնարարել է իւր քարտուղարին՝ Ախալցխայով անցնելիս, վերստին ստուգել պ. Մ. Հ-ի գործունէութիւնը. քարտուղարը զեկուցել է Խորհրդին, որ Ախալցխայում քննելով պ. Մ. Հ-ի գործունէութիւնը՝ միանգամայն ճիշդ է գտնում Ախալցխայի վարչութեան տեղեկագիրը նորա մասին։ Այս հիման վրայ, Խորհուրդը որոշել է յարգել Ախալցխայի ճիւղի առաջարկութիւնը և խնդրում է Ընդհանուր ժողովից՝ Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել պ. Խսահակ Մելիք-Հայկագեանցին։

... Հ. Նախագահողը յայտարարեց, որ պ. Խսահակ Մելիք-Հայկագեանց ընտրուած է պատուոյ անդամ Կովկ. Հ. Բարեգործական Ընկերութեան (ծափահարութիւններ)։ Տեղեկագիր, 1896 էջ 20—32։

Մելիք-Հայկագեանի (այժմ կարծեմ հանգուցեալ) նկատմամբ մի նկատողութիւն ևս. թէ Մելիք-Հայկագեան և թէ Լէօ ընկերութեան պատւաւոր անդամ հն ընտրւած իրենց գաւառական գործունէութեան շնորհիւ՝ մէկն Ախալցխայում, միւսը՝ Շուշում. բայց Լէօն իւր պատւաւոր անդամութեան պատմութիւնը յիշել է Թիֆլիսի կենդրոնական Խորհրդի գործունէութեան և Ընկերութեան ընդհանուր բարերարների շարքում, իսկ Մելիք-Հայկագեանինը՝ Ախալցխայի ճիւղի պատմութեան մէջ (էջ 269 և 156), և նոյնիսկ բացակայում է Մելիք-Հայկագեանի պատկերի տակ պատւաւոր անդամ կոչումը, որ սովորաբար թէ Լէօի և թէ միւս պատւաւոր անդամների պատկերների տակ է գրւած։

ԵՐԵՐԴ:

Արդէն երկաց, որ Լէօն յօրելենական շրջանը ուղցըրել է ի գէմս Խորհրդի նախագահ Սամսոն Յարութիւն-

եանի. Նման երկու կեղծիք էլ յիշում ենք այստեղ, հեղինակի տենդենցը մերկացնելու համար, առանց այլ ևս ոչ շեղատառ զբիթոր թւելու և ոչ էլ մէկ կամ միւս շրջանի նիւթերի ընտրութեան և դասաւորութեան խիստ գունաւոր պատկերը ցոյց տալու, որ արել է Լէօն:

ա) «Երեսնամեակի» էջ 265.

«Նորիուրդը այդ նախահաշուով սպասում էր սովորական մուտք և նուէրներ 18624 թուրի, մի գումար, որ երբէք հանդէս չէ եկել ընկերութեան նախահաշիւների մէջ»:

Այստեղ խօսքը 1908 թւի նախահաշւի մասին է, բայց իրականութեան դէմ է. շատ տարիներ առաջ, 1898 թւի նախահաշիւը 18416 ր. 25 կ. է, իսկ իրական մուտքը 20,145 ր. 24 կ., 1897 թւի նախահաշիւն է 18162 ր. 21 կ., իսկ իրական մուտքը 51,800 ր. 94 կ., և իրական ծախքը 39726 ր. 94 կ., այսինքն՝ երկու անգամ աւելի քան այն գումարը, որի համար «Երեսնամեակի» մէջ գրւած է թէ երբէք հանդէս չէ եկել (Տեղեկագիր 1898, էջ 8—9, 12—13 և 1897, էջ 74, 77): Վերջապէս սխալ է թէ 1908 թւի նախահաշիւը 18624 ր. է: Համաձայն 1908 թւի Տեղեկագրի (էջ 111—112) նախահաշիւը 16522 ր. 64 կ. է, այն է՝ 58,838 ր. 39 կոպէկից հանած Անանեանի (20,000), Ղարաջեանի (15,000), Աֆրիկեանի (2100) և պետ. ունտ. վաճառման 5215 ր. 75 կ.) անձեռնամիւելի և յատուկ գումարները:

բ) «Երեսնամեակի» էջ 271—2.

«Ներկայ կազմը... Այս կազմի մեծագոյն մասը (Յարութիւնեան, Սպենդիարեան, Սարուխանեան, Շահնազարեան, Շահիկեան, Մելքումեան) Ընկերութեան երկարամեայ ծառայութիւններ մատուցած մարդկանցից է բաղկացած»:

Ճշմարտութիւնն այս է, որ Ընկերութեան սուաջին

երեսնամեայ կեանքի ընթացքում ոչ թէ երկարամեայ, այլ վերջին երեք տարին միայն Խորհրդի մէջ են եղել Յ. Շահնազարեան և Ս. Մելքումեան, որոնց՝ փոխանակ ներբողելու, «Երկարամեայ շրջան ստեղծելով, կարելի էր եռամեայ յաջող գործունէութիւնը մատնանիշ անել: Ինչու այն ժամանակ չեն ներբողւած հին շրջանների գործիչներից նոյնիսկ նոքա, որոնք երկու անգամ աւելի շերկարամեայց ծառայութիւններ են արել Ընկերութեան համար: Օր. Արրահամ երեցփոխեանը, որ 1897 թւից մինչև 1902 թիւը եղել է Խորհրդի անդամը, չորս տարի Խորհրդի փոխանախագահը (1899—1902) և մերթ Խորհրդի լիազօրը օրէնսդրական գործառնութեանց համար. Յ. Ամիրխանեանը (1899—1902), Վահան Արծրունի (1894—1898) և այլն և այլն ծիշտ է սրանց անունները մէկ կամ միւս գեկուցման առիթով, մի մի անդամ սպառուել են Լէօնի գրչի տակ, բայց առանց ներբողւելու թէ Երկարամեայ ծառայութիւններ են մատուցել Ընկերութեան:

«Երկարամեայ» բառը պատմաբանի համար նաև խարակտերիստիկ է իրեւ ոճ. Նրա աշխատութեան մէջ այդ բառը մերթ նշանակում է երեք տարի (Յ. Շահնազարեանի և Ս. Մելքումեանի համար), մերթ նշանակում է տասներեք տարի (Անանեանի համար, էջ 132 «բազմամեայ գործունէութիւն») և մերթ նշանակում է տասնիննը տարի (Մելիք-Ազարեանի համար էջ 131, «Երկարժամանակով մնաց Խորհրդի կազմի մէջ»):

Զորրող՝ «Երեսնամեակի» էջ 140 Երկու սխալ ունի:

ա) «Առաջին տարին, երբ կազմակերպչական շրջանում էր Ընկերութիւնը, տեղի ունեցաւ ընդհանուր ժողովի ութ նիստ, Ցետոյ այդ թիւը սկսեց պակասել»:

Ծիշտ է՝ առաջին տարի ասելով հեղինակը հասկանում է 1881—1882 թիւը՝ բայց սխալ միտք է նա յայտնել, որովհետեւ հետեւալ 1883 թւին տեղի է ունեցել տասը ընդհանուր ժողով: Մի դժւար բան չէր այդ ստու-

գել. Խորհրդի առաջին Տեղեկագրի 17 երեսում դրւած է.
«Բնդիանուր ժողովի և Խորհրդի նիստերի քանակութիւնը հետևեալ պատկերն է ներկայացնում»:

	1881 իւ 1882	1883	1884
1) Ընդհ. ժողով . . .	8	10	6
2) Խորհուրդ . . .	44	26	26

բ) «Բնդիանուր ժողովների նախագահ է եղել քժ. Միքայէլ Շահպարոնեան սկզբից մինչև 1883-ի գեկտեմբերը. երդուեալ հաւատարմատար Սենեքերիմ Արծրունի—այդ ժամանակից մինչև 1889 թ., երբ նա հրաժարւում է և քժ. Բ. Նաւասարդեան—1889-ից մինչև 1999 թ.»:

Սիալ է այստեղ այն, թէ 1889-ից սկսած նաւասարդեանն է ընդհանուր ժողովներին նախագահում, քանի որ Սենեքերիմ Արծրունին 1890 թւին էլ է այդ պաշտօնը վարել, համաձայն նոյն թւի Թիֆլիսի հայ մամուլի վկայութիւնների:

Հինգերորդ:

«Երեսնամեակի», մէջ յաճախ մի երեսում հերքւած և հակառակն է ասւած կամ ընդհանուր որոշումներով է քօղարկւած այն, ինչ որ մի ուրիշ երեսում ասւած է որոշ և հաստատ. պատճառը աղքիւրների թերի ծանօթութիւնն է և առաջ է եկել այսպէս. Ա խնդրի պատմութիւնը մի դոկումենից ճիշտ ընդորինակելուց յետոյ, երբ շատ յետոյ նոյն խնդրին հեղինակը հանդիպել է մի այլ դոկումենի մէջ, ընդհանուր բաներ ասելով է խնդրիը փակել՝ թէ մոռացած լինելով իր արդէն մի անգամ ճիշդ արձանագրածը և թէ չը տիրապետելով կատարելապէս իր նիւթի մանրամասնութեան։ Եւ վերջում ստացւել են մի շարք անմեկնելի մնացած դիլեմմաներ։

«Երեսնամեակի» էջ 131.—«Քարտուղար Աւետիք Եղեկեանը պաշտօնավարեց սկզբից մինչև 1892 թ. կէսը»:
«Երեսնամեակի» էջ 52. — «Մինչեւ մի յարմար մարդ

գտնելը, քարտուղարութեան պաշտօնը ժամանակաւորապէս յանձն առաւ անգամ Խոսրովեանը։ Մի քանի ամսից յետոյ. այն է 1882 թ. ապրիլի 2-ին քարտուղար է հրաւիրւում պ. Աւետիք Եղեկեանը»:

Մեր ստորագծած բառերը—սկիզբն և մինչեւ որքան էլ կարճ լինեն, բայց երկար միտք ունին այն մասին թէ հեղինակը խարխուլ տեղեկութիւն ունի՝ մինոյն խնդրի մասին տարբեր բաներ ասելու համար։

Պէտք է դեռ այն էլ նկատել, որ նախ քան Եղեկեանի ունկաւոր քարտուղարութիւնը, այդ պատճենը ձրի կատարել է, բայցի Խոսրովեանից; նաև Յովհաննէս Զիգեանեանը, որին Լէօն մոռացել է յիշել։ Լէօն պիտի չը մոռանար յիշելու նաև մի ուրիշ անձնաւորութեան նոյնպէս ձրի մինոյն պաշտօնը վարելը 1899 թւին չորս ամիս, այսինքն՝ այնքան ժամանակ, որքան Խոսրովեանինը, և համեմատաբար աւելի դժւար պայմաններում, որովհետեւ Խոսրովեանի ժամանակ ընկերութիւնը չունէր ոչ 18 ճիւղ, ոչ գրադարան-ընթերցարան և ոչ էլ Խուդագեան կտակ, ինչպէս էր վերջում,—որպէս զի քարտուղարութեան պաշտօնի լրիւ ծանօթութիւն ստացւի։ Մեզ թւում է, որ մեր այս նկատողութեան ոյժը պիտի թուլանայ մի քիչ, երբ ընթերցողն իմանայ, որ այդ անձնաւորութիւնը հէնց ինքն այս տողերի գրողն է, բայց ընթերցողի տպաւորութիւնը չէ խնդրիը, այլ Խորհրդի գործավարութեան լրիւ քրոնիկոնը։

Վեցերորդ:

Լէօն ցանկացել է Ընկերութեան կեանքը կապել որոշ անձնաւորութիւնների հետ և իր այդ՝ պատմագիտական սկզբունքային սխալի շնորհիւ նոյնիսկ իւսողութիւնները փոխանակ ստուգելու խառնաշփոթել է այն աստիճանի, որ մի նոր պատմութիւն և ստուգութիւն պէտք է Ընկերութեան զարգացման հետևողական քայլերը պարզելու համար։

«Երեսնամեակի» էջ 53 և 139.

«Ալէքսանդր Մելիք-Ազարեան» գանձապահ և փոխ-
նախագահ էր 1882 թվից մինչև 1899 թ.

«Ալէքսանդր Մանթաշեան» Խորհրդի անդամ և փոխ-
նախագահ էր մինչև 1895 թւականի կէսը:

«Փիլիպոս Վարդապարեան» Խորհրդի անդամ և գան-
ձապահ էր 1895 թվից:

Բոլորը սիսալ բաներ են սոքա և հակասական: Միա-
ժամանակ Խորհուրդն երբէք երկու փոխ-նախագահ և
երկու գանձապահ չի ունեցել: Սկզբից չէ Մելիք-Ազարեան
գանձապահ և փոխ-նախագահ դարձել: Ո՞չ Մանթաշեանն
է սկզբից փոխ-նախագահ դարձել և ոչ էլ մինչև վերջն է
Անանեան Խորհրդի նախագահ եղել, իսկ Մելիք-Ազարեան՝
գանձապահ:

Փոխ-նախագահութիւն արել են.

- 1) Դիմիտրի Տէր-Ասատուրեան 1882 թ.
- 2) Նիկողայոս Խոսրովեան 1883 թ.
- 3) Բագրատ Նաւասարդեան 1884 և 1885 թ.
- 4) Մանթաշեան 1886—1896 թ.
- 5) Մելիք-Ազարեան 1896—1899
- 6) Ա. Երէցփոխեան 1899

Գանձապահ են եղել.

- 1) Անանեան 1881 թ.
- 2) Զիթաղեան 1882 թ.
- 3) Մելիք-Ազարեան 1883—1898 թ.
- 4) Փ. Վարդապարեան 1898—1899 թ.

Անդամ են եղել մի մի տարի:

- 1) Գարբիէլ Սունդուկեան 1882 թ.
- 2) Ներսէս Աթարէկեան 1882 թ.,
- 3) Միքայէլ Շահպարոնեան 1884 թ.
- 4) Աղէքսանդր Եսայեան 1884 թ.

Անդամ են եղել առաջին երկու տարին:

- 1) Յովհաննէս Զիթաղեան
- 2) Նիկողայոս Խոսրովեան

Իսկ երկրորդ և երրորդ տարին

- 1) Սպանդար Սպանդարեան
- 2) Աղէքսանդր Քիշմիշեան
- 3) Մինաս Առաքելեան:

Այս բոլորից երկում է, որ՝ ինչպէս բնական էլ է,
Ընկերութեան կազմակերպչական շրջանի մէջ (1881—1885)
լումա ունին և շշաւելու արժանի են ոչ միայն Անսմնեան,
Մելիք-Ազարեան և Մանթաշեան—երեք Ալէքսանդրներ,
որոնց Լէօն Մակեդոնացի է դարձել Ընկերութեան
պատմութեան մէջ,—այլ ամբողջ ժամանակի երիտասար-
դութիւնը: Ընկերութիւնն ունեցել է հէնց հիմնադրական
ժողովներից սկսած զարգացման մի քանի փուլեր, որոնք
չեն երեսում Լէօնի երեք Ալէքսանդրների շուրջը խտաց-
րած նկարագրից: այդ փուլերը երկար ժամանակ ազդել
են և խոր հետք են թողել Ընկերութեան հետեւեալ տարի-
ների և փուլերի և նոյնիսկ Ալէքսանդրների վրա, բայց
թէ ինչ բնաւորութեամբ—այդ էլ չի երեսում Լէօնի գըր-
քում և մենք թողնում ենք այդ խնդիրը:

Ահա այդ նկատումներով պէտք է ինամքով յիշել
երկարամեայ պաշտօնեաների հեռանալը կամ ընդմիջումը,
իսկ Լէօն խմբագրել է այսպէս.

Ընկերութեան երկարատև ծառայութիւն են մա-
տուցել Ալէքսանդր Անանեան, որ վարել է Խորհրդի նա-
խագահի պաշտօնը անընդհատ մինչև 1899 թւականը, երբ
փոխւեց ընկերութեան կանոնադրութիւնը և Ալէքսանդր
Մելիք-Ազարեան գանձապահի և փոխ-նախագահի պաշտօ-
նով, 1882 թվից մինչև 1899 թ.» (էջ 53).

«Նախագահ Անանեանը և գանձապահ Մելիք-Ազար-
եանը մացին մինչև առաջին շրջանի վերջը 1881—1899,
էջ 121»:

Սխալ է այս բոլորը. Անանեանը երկրորդ անգամ
ընդմիջել է 1895 թվին, որ Լէօն մոռացել է յիշել.

«Խորհրդի նախագահ պ. Անանեան, աչքելի տկա-
րութեան պատճառով բացակայել է 1895 թիւ յունուար

24.ից մինչև հոկտեմբեր 14-ը՝ (Տեղեկագիր 1895 էջ 15, ծանօթ. 2):

Բացի այդ՝ նա թողել է նախագահութիւնը առաջին շըրջանի վերջից մի քանի ամիս առաջ՝ թէ 1895 թւի ընդմիջումը իր հետևանքով և թէ 1899 թւի գալարումը իր պատճառներով Ընկերութեան պատմութեան մէջ երբեկցէ նշանաւոր էջեր պիտի գրաւեն:

Մելիք-Ազարեան գանձապահ է եղել ոչ թէ սկզբից, 1882 թւից, այլ Յ. Զիթախեանից յետոյ. 1883 թւից սկսած, նա թողեց այդ պաշտօնը ոչ թէ առաջին շրջանի վերջում 1899 թ. սեպտ. 20-ին, այլ 1898 թ. մայիսի 12-ին: Արդ՝ Զիթախեանին իր գանձապահի յիշել էական էր Ընկերութեան կազմակերպչական շրջանի պատմութիւնն ամբողջացնելու համար, իսկ գանձապահի 1898 թ. մայիսին փոխւելը նշանաւոր էր իր հետևանքներով (էջ 52 և 139):

Եօթերորդ:

Անփոյթ վերաբերմունքը և թափթփած տեղեկութիւնները իրեկ լրիւ նիւթ առաջարկւելը աչքի է ընկնում լէօի զբքի մէջ ոչ միայն հին շրջանների պատմութեան վերաբերմամբ, ուր պէտք էր արխիւի փոշին սրբել, մամուլի նիւթերը դասաւորել և կովկասեան ու անդր քան Սիսուրեան գաղթականների շարժման պատմութիւնն աչքի անցկացնէր, այլ նաև անփոյթ է եղել հեղինակը նորագոյն շրջանի վերաբերմամբ:

«Երեսնամեակ» էջ 268

«1908—1910 թ. խորհուրդը աշխատելով մեծացնել (100 ր. վճարող) մշտական անդամների թիւը, կարողացաւ մշտական անդամներ գտնել, որոնց թիւը առ 1 յունվարի 1910 թ. կազմում էր 29 հոգի».

Այս թիւը սխալ է. բայց Տեղեկագրերի, 1908 թւին եղել է ութ մշտական անդամ (98 էջ), իսկ 1909 թւին՝

տասներկու (հաշիների 2 և 10 էջերը), ընդամենը 20 և ոչ թէ 29: Բացի անստոյգ տեղեկութիւնից ուրիշ բան էլ է ասում այդ էջը. ինչպէս յայտնի է՝ Բարեգործական Ընկերութեան երեսնամեակը լրացաւ 1911 թ. նոյեմբերին. ինչու ուրեմն մինչև այդ թիւը չէ արձանագրւած մշտական անդամների թիւը, այլ ամբողջ 1910 և 1911 թւերը բաց են թողնւած՝ յայտնի չէ, եթէ միայն չուղենաք տեսնել այդտեղ հեղինակի թափթփուկ, շուտափոյթ և անինամ վերաբերմունքը գէպի Հայոց Պատմութիւնը, գէպի Բարեգործական Ընկերութիւնը և գէպի ընթերցող հասարակութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Թւելով այս նմուշները, մենք հասկանալի ենք համարում այլ ևս մեր միտքը և չենք շարունակում. բայց վերջակէտ դնելուց առաջ դառնում ենք «Երեսնամեակի» Յառաջաբանին և նրա մտքերից շատերը համարում ենք առւած միամիտ ընթերցողների աչքին թող փշելու համար: Այդպէս են—նախ՝ իրը թէ հեղինակը «նիւթեր է տել հասարակաց արդիւնաւորող մտքի պատմութեան համար», երկրորդ՝ իրը թէ «կենդրոնի ամբողջ գործունեութիւնն է արձանագրւած ներկայ աշխատութեան մէջ», երրորդ՝ իրը թէ «ներկայ պատմութիւնը հիմնած է թէ Խորհրդի արխիւի դոկումենների և թէ մամուլի տեղեկութիւնների վրա»:

Մենք ժխտում ենք այս բոլորը, որովհետեւ եթէ ուզում էր լէօն, որ իսկապէս այնպէս լինէր, ինչպէս Յառաջաբանի մէջ է նա մարդկարտաշարել պէտք է նա նախ՝ դոկումենները չը կեղծէր. երկրորդ՝ առ ոսս մեծատանց

և անւանեաց չը դեգերէր. երբորդ՝ թաթփուկ տեղեկութիւններով ներբողներ չը յօրինէր և չորրորդ՝ գէթ մեռած գնացած գործիչների յիշատակի առաջ իր գրիչը սարսափէր և խորտակէր՝ նախ քան ծռելն ու շեղելը¹⁾:



Բացի այս գրամբնականից, „Երեսամեակին“ է վերաբերում նաև մեր ներազիր, նաև Բարեգործական բնկերութեան Խորհրդին, նրա յօրելեանի առիրով. „Թիմիս, Կովկասեան Հայոց Բարեգործական Բնկերութեան Նախագահ Սամսոն Յառութիւնեանին: Շնորհաւորում եմ Ընկերութեան արդիւնաւ էս գործունեութեան յօրելեամբ: Ցանկանում եմ ապագայ բարգաւանումն: Ավասու միայն, որ նրա նիմադրութեան պատմութիւնը յօրելենական գրեյլի մէջ յեղարշած կերպարան ունի: Գրիզու Տէր-Պողոսեան, Շուշի, 1911 թիւ:

¹⁾ Բացի այս գրամբնականից, „Երեսամեակին“ է վերաբերում նաև մեր ներազիր, նաև Բարեգործական բնկերութեան Խորհրդին, նրա յօրելեանի առիրով. „Թիմիս, Կովկասեան Հայոց Բարեգործական Բնկերութեան Նախագահ Սամսոն Յառութիւնեանին: Շնորհաւորում եմ Ընկերութեան արդիւնաւ էս գործունեութեան յօրելեամբ: Ցանկանում եմ ապագայ բարգաւանումն: Ավասու միայն, որ նրա նիմադրութեան պատմութիւնը յօրելենական գրեյլի մէջ յեղարշած կերպարան ունի: Գրիզու Տէր-Պողոսեան, Շուշի, 1911 թիւ:



ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Եղիշէի պատմութեան աղբիւրը:
2. Նկատողութիւններ Եղիշէի Պատմութեան վերաբերեալ:
3. Նկատողութիւններ Քաւոտոսի Պատմութեան վերաբերեալ:
4. Նախնի Հայոց հոգեպաշտութեան զրջանից:
5. Լեռնականք Ա. — Ուրուսրի:
6. « Բ. — Թագաւորեան Հասարակութիւն»:
7. Լէօն իբրև պատմաբան:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Հայոց Շոշա, Արմянская Духовная Семинария,
Григорію Тер-Погосянъ

82.349